World Health Organization
European Region

International Diabetes Federation
Europe

Շաքարային դիաբետի հայտնաբերման և խնամքի որակի բարելավման հանձնառությունների կատարմանն ուղղված գործողությունների արագացում

2023 թվականի նոյեմբերի 28-29 | Բելգրադ, Սերբիա

Շաքարային դիաբետի հայտնաբերման և խնամքի որակի բարելավման հանձնառությունների կատարմանն ուղղված գործողությունների արագացման հռչակագիր

1. Մենք ՝ Առողջապահության համաշխարհային կազմակերպությունը (ԱՀԿ), Միավորված ազգերի կազմակերպության մասնագիտացված գործակալությունը Եվրոպայում իր տարածաշրջանային գրասենյակի միջոցով և Եվրոպայում Շաքարային դիաբետի(ՇԴ) միջազգային ֆեդերացիան (ՇՄՖ), շաքարային դիաբետի դեմ պայքարի ազգային ասոցիացիաների շահույթ չհետապնդող մայր կազմակերպությունը, ստորագրելով սույն հռչակագիրը, որն ընդունվել է Շաքարային դիաբետի հայտնաբերման և խնամքի որակի բարելավման հանձնառությունների կատարմանն ուղղված գործողությունների արագացման թեմայով Բարձր մակարդակի տեխնիկական գագաթնաժողովի շրջանակներում, ճանաչում ենք մեր համապատասխան դերերն ու մանդատները և միավորվում ենք՝ անդամ պետություններին աջակցություն առաջարկելու համար:

2. Մենք գիտակցում ենք անդամ պետությունների կողմից գործադրված զգալի ջանքերը վաղաժամ մահացությունը նվազեցնելու և ԱՀԿ Եվրոպական տարածաշրջանում շաքարային դիաբետի հայտնաբերման, ախտորոշման և բուժման բարելավման ուղղությամբ:

3. Հիշեցնում ենք հետևյալ նպատակների և հանձնառությունների մասին.

   - Կայուն զարգացման 2030 թվականի օրակարգը, մասնավորապես, Կայուն զարգացման նպատակ (ԿԶՆ) 3-ի թիրախ 4-ը՝ ոչ վարակիչ հիվանդություններից վաղաժամ մահացությունը մեկ երրորդով նվազեցնելու և թիրախ 8-ը՝ հասնելու համընդհանուր առողջապահական ծածկույթի.
   - Առողջապահության համաշխարհային յոթանասունչորսերորդ ասամբլեայի 74.4-րդ բանաձևը՝ ոչ վարակիչ հիվանդությունների բեռի նվազեցման մասին՝ շաքարային դիաբետի կանխարգելման և վերահսկման ուժեղացման միջոցով.
   - 2030 թվականի շաքարային դիաբետի գլոբալ ծածկույթի թիրախներ, որոնք ընդունվել են Առողջապահության համաշխարհային ասամբլեայի 75-րդ համաժողովի կողմից.

- Ոչ վարակիչ հիվանդությունների կանխարգելման և վերահսկման գլոբալ և եվրոպական գործողությունների ծրագրեր.
- «Առողջություն 2020» համատեքստում ոչ վարակիչ հիվանդությունների կանխարգելման և վերահսկման մասին Աշխարհի հռչակագիր.
- ԱՀԿ գլոբալ պայմանագիր շաքարային դիաբետի դեմ պայքարի վերաբերյալ. և
- Եվրամիության անդամ պետությունների համար, Եվրոխորհրդարանի բանաձևը Եվրամիությունում շաքարային դիաբետի կանխարգելման, կառավարման և խնամքի բարելավման մասին՝ Շաքարային դիաբետի դեմ պայքարի համաշխարհային օրվա կապակցությամբ:

4. Մենք նկատում ենք, որ չնայած այս հանձնառություններին, ԱՀԿ Եվրոպական տարածաշրջանում ՇԴ ունեցող մարդկանց թիվը շարունակում է աճել. ըստ ՇՄՖ-ի գնահատման՝ շաքարային դիաբետի դեպքերի մեկ երրորդը մնում է չախտորոշված, իսկ կեսը չի կարողանում հասնել բուժման թիրախներին : Մենք հայտնում ենք մեր մտահոգությունը՝ իրականացվող գործողությունների արագության և արդյունավետության վերաբերյալ:

5. Մենք կարևորում ենք այն դերը, որը կարող է ունենալ շաքարային դիաբետի արդյունավետ կանխարգելումն ու բուժումը՝ օգնելով բարելավել առողջապահական համակարգերի կենսունակությունն ու կայունությունը:

6. Մենք գիտակցում ենք ազգային առողջապահական համակարգերի առջև ծառացած աճող մարտահրավերները «շարունակական ճգնաժամի դարաշրջանում» և մրցակցային առաջնահերթությունները, որոնք շեղում են ոչ վարակիչ հիվանդությունների որակի բարելավմանն ու կանխարգելմանն ուղղված ներդրումները , ինչպիսին է շաքարային դիաբետը, և, հետևաբար, կոչ ենք անում ճանաչել հանձնառությունները և առավել ուշադրություն դարձնել համաձայնեցված նպատակների ուղղությամբ առաջընթացն արագացնելու գործողությունների վրա:

7. Մենք անհանգստացած ենք շաքարային դիաբետ և այլ ոչ վարակիչ հիվանդություններ ունեցող մարդկանց խնամքի շարունակականության վրա բոլոր վտանգների ազդեցությամբ և գիտակցում ենք, որ նրանք ամենաշատն են տուժում, օրինակ՝ ՇԴ ունեցող մարդիկ կորոնավիրուսային հիվանդությամբ (COVID-19) ծանր հիվանդանալու կամ մահանալու ավելի բարձր ռիսկ ունեն:

8. Մեզ մտահոգում է, որ ՇԴ ունեցող մարդկանց թիվն ավելանում է, թեև շաքարային դիաբետի որոշ տեսակներ հնարավոր է կանխարգելել, և մենք նկատում ենք, որ ՇԴ ունեցող մարդկանց թվի աճը սերտորեն կապված է դրա հիմքում ընկած ռիսկի գործոնների անբավարար կանխարգելման հետ, ինչպիսիք են՝ հավելյալ քաշը և ճարպակալումը, անառողջ սննդակարգը, ֆիզիկական ցածր ակտիվությունը և ծխախոտի օգտագործումը, ինչպես նաև այն կապված է առողջության վրա սոցիալ-տնտեսական կարգավիճակի և սոցիալական, տնտեսական և շրջակա միջավայրի գործոնների ազդեցության հետ:

9. Մենք կարևերում ենք «ամբողջական կառավարության» և «ամբողջական հասարակության» մոտեցումները, ինչպես նաև շահագրգիռ կողմերի ԱՀԿ-ի, ոչ պետական դերակատարների, ինչպիսին է ՇՄՖ-ը, և անդամ պետությունների ներգրավվածության ու համագործակցության կարևորությունը՝ շաքարային դիաբետի կանխարգելման և վերահսկման ազգային, տարածաշրջանային և գլոբալ ծրագրերի առաջխաղացման գործընթացում:

10. Բացի այդ, մենք հասկանում ենք բարդ խնդիրների ըմբռնման և լուծման գործում կենսափորձ ունեցող մարդկանց բովանդակալից (հարգալից, արժանապատիվ և արդարացի) մասնակցության կարևորությունը, որպեսզի կարողանանք համատեղ մշակել, իրականացնել, վերահսկել և գնահատել համապատասխան լուծումները:

11. Մենք ողջունում ենք Շաքարային դիաբետի դեմ պայքարի եվրոպական ֆորումի հետ համագործակցության բարձր արժեքը և նրա անդամ ասոցիացիաների հետ համագործակցության ուժն ու հնարավորությունը:

12. Մենք գիտակցում ենք Եվրոպայում ավելի լավ առողջության համար միասնական գործողությունների և բարեկեցության տնտեսության կարևորությունը, որն ապահովում է որակյալ առողջապահական ծառայություններիհամընդհանուր դյուրին հասանելիություն, որը մարդկանց դնում է ծառայությունների կենտրոնում և ձգտում է նվազեցնել առողջապահական անհավասարությունները՝ փակելով առողջապահության բնագավառում բացերը և ոչ ոքի չանտեսել, ինչպես սահմանված է ԱՀԿ 2020-2025 թվականների Աշխատանքային եվրոպական ծրագրում:

13. Մենք հայտարարում ենք, որ կառավարությունները տեղյակ են այս պարտավորությունների մասին և արդեն իսկ կարևոր քայլեր են ձեռնարկում դրանք իրականացնելու համար, սակայն իրականացման ընթացքում բախվում են աճող մարտահրավերների, և, հետևաբար, կոչ ենք անում անդամ պետություններին գագաթնաժողովի քննարկումներից հետո ձեռնարկել հետագա գործողություններ՝ համաձայն Առողջապահության համաշխարհային ասամբլեայի 74.4 բանաձևի.

(1) կիրառել «ամբողջական կառավարության» և «ամբողջական հասարակության» սկզբունքային մոտեցումները, որոնք արձագանքման մեջ կենտրոնական տեղը հատկացնում են շաքարային դիաբետի և ճարպակալման հետ կապված հինգ գլոբալ կամավոր թիրախներին:

(2) բարձրացնել շաքարային դիաբետի կանխարգելման և վերահսկման առաջնահերթությունը ոչ վարակիչ հիվանդությունների դեմ պայքարի ազգային արձագանքներում, ներառյալ ճարպակալման վերահսկումը, վաղ ախտորոշումը, բուժումը, խնամքը և բարդությունների կառավարումը՝ հաշվի առնելով ազգային առաջնահերթությունները.

(3) ամրապնդել քաղաքականությունը, օրենսդրական և կարգավորող միջոցառումները, ներառյալ, անհրաժեշտության դեպքում նաև ֆինանսական միջոցները, որոնք ուղղված են նվազագույնին հասցնելու շաքարային դիաբետի հիմնական ռիսկի գործոնների ազդեցությունը, ինչպես նաև խթանել առողջ սննդակարգը և ապրելակերպը.

(4) բարձրացնել իրազեկվածությունը ազգային հանրային առողջության վրա շաքարային դիաբետի բեռի մասին ապրելիության հեռանկարից, ինչպես նաև շաքարային դիաբետի, աղքատության և սոցիալ-տնտեսական զարգացման, ինչպես նաև ճարպակալման և 2-րդ տիպի շաքարային դիաբետի զարգացման ռիսկի միջև կապի մասին.

(5) ապահովել ուշադրության շարունակական կենտրոնացումը բոլոր մարդկանց բուժման և խնամքի բարձր մակարդակի պահպանման վրա՝ անկախ COVID-19 համաճարակից, ներառյալ ԾԴ ունեցող մարդկանց, հատկապես ցածր և միջին եկամուտ ունեցող երկրներում՝ գիտակցելով, որ շաքարային դիաբետի կանխարգելմանն ու վերահսկման ջանքերին խոչընդոտում են, ի թիվս այլ բաների, որակյալ, անվտանգ, արդյունավետ և մատչելի հիմնական առողջապահական ծառայությունների, դեղերի, ախտորոշման և բժշկական տեխնոլոգիաների համընդհանուր հասանելիության բացակայությունը, ինչպես նաև որակյալ բուժաշխատողների գլոբալ պակասը.

(6) վստահ լինել, որ ոչ վարակիչ հիվանդությունների կանխարգելման և վերահսկման ազգային ռազմավարությունները պարունակեն անհրաժեշտ դրույթներ՝ ԾԴ ունեցող մարդկանց որակյալ հիմնական առողջապահական ծառայություններ մատուցելու և ախտորոշման, նաև որակյալ, անվտանգ, արդյունավետ, մատչելի և հիմնական դեղամիջոցների, ներառյալ ինսուլինի, /պերօրալ/հիպոգլիկեմիկ և դիաբետի հետ կապված այլ դեղամիջոցների, բժշկական տեխնոլոգիաների հասանելիությունը բոլոր մարդկանց ապահովելու համար՝ համաձայն ազգային համատեքստի և առաջնահերթությունների.

(7) զարգացնել առողջապահական համակարգերը և բարձրորակ, համապարփակ և մարդկանց վրա կենտրոնացած առաջնային առողջապահական ծառայությունները բոլորի համար, առողջության կառավարման տեղեկատվական համակարգերը և որակավորված, վերապատրաստված և սարքավորումներով զինված առողջապահական կազմակերպությունների անձնակազմը՝ հաշվի առնելով ազգային համատեքստը.

(8) բարելավել շաքարային դիաբետի կանխարգելումն ու վերահսկումը ողջ կյանքի ընթացքում՝ նվազեցնելով դրա փոփոխելի և կանխարգելվող ռիսկի գործոնները, ներառյալ ճարպակալումը և ֆիզիկական ցածր ակտիվությունը և ապահովել առավել անվտանգ, մատչելի, արդյունավետ և որակյալ հիմնական ախտորոշման, դեղորայքի և առողջապահական այլ արտադրանքների հասանելիությունը.

(9) խթանել առողջ ապրելակերպը և առողջապահական գրագիտությունը, ներառյալ պարզ, բարձրորակ, հիվանդի համար մատչելի տեղեկատվության և կրթության հասանելիության միջոցով.

(10) ուժեղացնել շաքարային դիաբետի արձագանքման մշտադիտարկումը և գնահատումը երկրի մակարդակով հսկողության և մշտադիտարկման համակարգերի միջոցով, ներառյալ հետազոտությունները, որոնք ներկառուցված են առկա ազգային առողջապահական տեղեկատվական համակարգերում, և որոշելով դիաբետի հետազոտության առաջնահերթ ոլորտները.

(11) շարունակել համագործակցությունը՝ ազգային և տարածաշրջանային օրենսդրական շրջանակներին և համատեքստին համապատասխան՝ բարելավելու մատակարարների կողմից գրանցված շաքարային դիաբետի դեղամիջոցների և հարակից այլ առողջապահական միջոցների վերաբերյալ տեղեկատվության տրամադրումը:

14. Որպես ԱՀԿ եվրոպական տարածաշրջանային գրասենյակ և ՇՄՖ-ի Եվրոպայի տարածաշրջանային գրասենյակ՝ մենք համաձայն ենք աջակցել անդամ պետություններին՝ արագացնելով զարգացումը՝ հասնելու կամ, անհրաժեշտության դեպքում, գերազանցելու 2030-ի շաքարային դիաբետի գլոբալ թիրախները, որոնք են.
    - Շաքարային դիաբետ ունեցող մարդկանց 80%-ի մոտ այն ախտորոշվել է.
    - 80%-ը էֆեկտիվորեն վերահսկում է գլիկեմիան.
    - ՇԴ ախտորոշված մարդկանց 80%-ը արդյունավետ վերահսկում է արյան ճնշումը.
    - 40 տարեկան և բարձր տարիքի ՇԴ ունեցողների 60%-ը ստատիններ է ստանում և
    - ՇԴ տիպ 1 ունեցող մարդկանց 100%-ին հասանելի է մատչելի ինսուլին և արյան գլյուկոզի մակարդակի ինքնահսկում:

15. Մենք գիտակցում ենք, որ ողջամիտ առաջընթացին հասնելու համար կարևոր է ներգրավել բոլոր հիմնական շահագրգիռ կողմերին, հատկապես ՇԴ ունեցող մարդկանց, և համագործակցության այս ոգով է, որ մենք առաջ ենք քաշել այս հռչակագիրը:

Այս փաստաթղթի հայերեն լեզվով տարբերակը հասանելի է եվրոպական ՇՄՖ-ի տեխնիկական աջակցության և ֆինանսական աջակցության շնորհիվ: